ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 հոկտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

149
(2999)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՈՉԱՐՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԿԱՐԾԵՍ ԼՈՒՐՔ Է ԴՐՎԱԾ

«Ազատություն»-ը, երեկ հղում անելով իր աղբյուրներին, հայտնեց՝ ՔՊ-ում Անդրանիկ Քոչարյանին ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից հեռացնելու հարց է բարձրացվել:

Թեեւ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը հերքեց տեղեկությունը, բայց հստակ է՝ ՔՊ-ում մի մեծ խումբ դժգոհ է Անդրանիկ Քոչարյանից, քանի որ վերջինս մշտապես ՔՊ-ում փորձել է իր թիմը ձեւավորել, խարդավանքներ է հյուսել, չենթարկվողների նկատմամբ պատժամիջոցներ կիրառել, ինչի պատճառով իշխանական մի խումբ պատգամավորներ, մեղմ ասած, ատում են Քոչարյանին:

Իշխող թիմում հարաբերությունները սրվել են հատկապես Անդրանիկ Քոչարյանի նախաձեռնած՝ հանցավորության իրավիճակի մասով լսումներից եւ արդարադատության նախարարի թեկնածուների հետ կապված խոսակցություններից հետո:

Բանն այն է, որ Անդրանիկ Քոչարյանը հրապարակավ դժգոհել է, որ հոկտեմբերի 15-ին իր իսկ նախաձեռնած լսումներին ՔՊ 71 պատգամավորներից միայն մի քանիսն են ներկա եղել, ու մեղադրել է իշխանական պատգամավորներին, թե արհամարհական վերաբերմունք են իր նկատմամբ ցույց տվել: Նաեւ Նիկոլ Փաշինյանին է այդ անտարբերության մասին լուրեր հասցրել, որպեսզի նա «թիմի վրա բարկանա»:

Քոչարյանը կոպիտ ձեւով դժգոհել է իր թիմակիցներից, ինչն էլ շատերին վիրավորել է:

Պատճառներից մեկն էլ կապված է արդարադատության նախարարի թեկնածուների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Անդրանիկ Քոչարյանն ամեն գնով իր թեկնածուներին՝ Արփի Դավոյանին եւ Արմեն Խաչատրյանին է փորձել նախարար դարձնել, սակայն վարչությունը մերժել է, իսկ մյուս պատգամավորների առաջարկած թեկնածուները Քոչարյանի սրտով չեն եղել:

Հայտնել էինք նաեւ, որ ՔՊ խմբակցության պատգամավոր Հրաչ Հակոբյանն էլ իր ընկերոջ՝ Սիսակ Գաբրիելյանի թեկնածությունն է առաջարկել, ինչը, սակայն, ՔՊ վարչությունը չի էլ քննարկել:

Շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ Քոչարյանը վատ է արտահայտվել Սիսակ Գաբրիելյանի թեկնածության վերաբերյալ, ինչը վրդովվեցրել է Հրաչ Հակոբյանին ու Սիսակ Գաբրիելյանին: Վերջիններս էլ Քոչարյանի պաշտոնանկության հարցն են թիմում բարձրացրել, ինչը ՔՊ խմբակցության պատգամավորների մեծ մասի սրտով է եղել, բայց չեն համարձակվել մինչ այդ խոսել դրա մասին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանին կանչել են ՀՀ քննչական կոմիտե ու հարցաքննել: Հարցաքննության առիթը եղել է ֆեյսբուք սոցիալական ցանցով օգտատեր «Ռուբեն Կասյանից» ուղարկված նամակը Ռուբեն Ռուբինյանին, որով նրան հայտնել են, որ ՔՊ գրասենյակը պայթեցրել են: Ինչպես հայտնի է, ՀՀ քննչական կոմիտեն ՔՊ-ական պատգամավորների տան եւ գրասենյակների պայթյունի դեպքերով քրեական վարույթ է նախաձեռնել, եւ վարույթի շրջանակում կալանավորված 3 անձինք կան, որոնք չեն ընդունում առաջադրված մեղադրանքը: Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանի հարցաքննությունը: Հարցաքննության ընթացքում Ռուբինյանը խոսել է ստացած նամակի, ՔՊ գրասենյակի տարածքում պայթուցիկի տեղադրման եւ պայթյուն իրականացնելու ու դրա հետագա դեպքերի մասին: Հարցաքննությունն ամբողջությամբ կարող եք կարդալ ArmLur.am կայքում:

Փոխմարզպետ Հայկ Հարությունյանը պետական համակարգի հինաբնակներից է. աշխատել է եւ նախկին եւ ներկայիս իշխանությունների հետ՝ Ֆիզիկայի եւ մաթեմատիկայի ուսուցչից հասնելով Սյունիքի փոխմարզպետի պաշտոնին: Նա հայտարարագրել է 10 անշարժ գույք՝ 3 բնակարան բազմաբնակարան շենքում՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 4 հողամաս, 1 բազմամյա տնկի ունի փոխմարզպետը, բացի դրանից, եւս 2 անշարժ գույքերի մասին տեղեկություն պաշտպանված է գաղտնի կերպով: 2010-2014 թթ. Հարությունյանը եղել է Եղվարդի միջնակարգ դպրոցի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ: 2014-2022 թվականներին եղել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության կրթության բաժնի պետ: Իսկ հիմա արդեն փոխմարզպետ Հարությունյանը 2020 թվականին ձեռք է բերել 2008 թվականի արտադրության Mazda մակնիշի մեքենա: Փոխմարզպետի բանկային հաշիվների մնացորդը կազմել է 1.1 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ գրեթե 1.5 մլն դրամ: Հայկ Հարությունյանը Սյունիքի փոխմարզպետի պաշտոնում աշխատելիս ստացել է 9,5 մլն դրամ տարեկան եկամուտ: Փոխմարզպետի՝ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 2 մլն 779 հազար դրամ, որից 2 մլն 732 հազարը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Երեկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստում կրկին չընտրվեց արդարադատության նախարար, սակայն թեկնածուների շրջանակն աստիճանաբար ընդլայնվում է: ՔՊ վարչությունում հուսահատության մեջ են. իրենց «սրտի» նախարարին չեն կարողանում գտնել, սակայն ամեն շաբաթվա նիստում կա նախարարի մի նոր թեկնածու, որին չեն ընտրում: Այս անգամ ՔՊ վարչությունը որոշեց ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնում առաջադրել Սրբուհի Գալյանի թեկնածությունը: Կընտրվի նա վարչության կողմից թե ոչ՝ դժվար է ասել՝ հաշվի առնելով նախկին նախադեպերը: Տեղեկացնենք, որ Սրբուհի Գալյանը ՀՀ Գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալն է: Սա հենց այն ոլորտն է, որ սիրում է Նիկոլ Փաշինյանը, եւ դեռ հեղափոխության տարիներից վանկարկում էր՝ «Ո՛չ մի մուկ, ո՛չ մի ձուկ չի պլստալու»՝ նկատի ունենալով, թե պետությունից գողացվածը հետ է բերելու: Դա ստացվում է այնքանով, որ Գալյանի կողմից կարգավորվող ոլորտի թիրախում ամեն օր նախկին պաշտոնյաներից որեւէ մեկն է, որոնցից պետք է բռնագանձեն գույքեր եւ միլիոնավոր դրամներ: Կարծես թե, Գալյանը մոտ է «սրտի նախարար» դառնալու կոչմանը, բայց քանի դեռ չի նշանակվել, դժվար է ասել, որ հենց նա կլինի:

ԶՐՈՒՅՑ

«ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ ՎԵՐՑՆԵԼԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ՉԷ», ԲԱԳՐԱՏՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության ղեկավար Սերգեյ Բագրատյանը անդրադարձել է պետական պարտքի, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությանը:

-Պարոն Բագրատյան, արդեն երկրորդ օրն է՝ Ազգային ժողովում քննարկվում է 2025 թվականի պետական բյուջեի նախագիծը: Երեկ ֆինանսների նախարարը մի քանի ուշագրավ հայտարարություն արեց: Նախ՝ նշեց, որ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը այս պահի դրությամբ 5 տրիլիոն դրամ է կազմում, եւ ամեն ամիս Կառավարությունը նոր պարտք է վերցնում: Ի՞նչն է պատճառը եւ արդյոք զսպման մեխանիզմներ չկա՞ն, որպեսզի պարտքը նման աստղաբաշխական թվերի չհասնի:

-Նախ՝ պատկերացնենք պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը, քանզի հասարակ քաղաքացու համար այդքան էլ հստակ չէ, թե դրանք ինչի մասին են եւ ինչ թվեր են: Ես կցանկանամ, որ յուրաքանչյուրս սա պատկերացնի իր ընտանեկան բյուջեի հիման վրա: Այսինքն՝ ինչ է նշանակում լրացուցիչ պարտք վերցնելը. օրինակ, եթե մեր ընտանեկան բյուջեն տարեկան կազմում է մոտ երկու միլիոն դրամ, նշանակում է, որ մինչեւ 500 հազար դրամի սպառողական վարկ կարող ենք սպասարկել: Այսինքն՝ մենք հաշվում ենք, թե մեզ որքան գումար է պետք սննդի, վարձերի եւ այլ ծախսերի համար ու հաշվում գումարը: Եթե տարվա վերջին մենք կծախսենք մեկուկես միլիոնը եւ կես միլիոնը կմնա, ապա կարող ենք նոր հեռուստացույց գնել, կամ թանկարժեք սառնարան: Խնդիր է առաջանում այն ժամանակ, երբ ՀՆԱ եւ վարկեր հարաբերակցությունը անցնում է 60 տոկոսը: Դուք ասացիք՝ 5 տրիլիոն է արտաքին պարտքը, այսինքն՝ մոտ 12 միլիարդ դոլարի պետական վարկ ունենք: Դա կազմում է մեր ՀՆԱ-ի 49 տոկոսը միայն, եւ մեր հնարավորությունները ավելին են, քան մենք վերցրել ենք: Հիմա արդյոք արժե՞ վարկեր վերցնել: Վարկեր վերցնել արժե միայն այն դեպքում, երբ կան ծրագրեր, որոնց իրագործման համար պետությունը ներքին գումար չունի եւ հնարավորությունները բավարար չեն: Օրինակ, որպեսզի հյուսիս-հարավ ճանապարհը կառուցենք հասնենք տեղ, մենք մտածում ենք, որ այդ հնարավորությունը կունենանք տասը տարի հետո: Բայց արդյոք ավելի լավ չէ՞ մենք հիմա վարկ վերցնենք, ճանապարհը կառուցենք, եւ տասը տարի եկամուտ ունենանք այդ ճանապարհից, քան սպասենք, որ տասը տարի հետո, բյուջեի հնարավորության սահմաններում, կարողանանք կառուցել այն: Այնպես չէ, որ ես կարծում եմ, թե վարկ վերցնելը լավ բան է, սակայն չեմ էլ կարծում, որ դատապարտելի է. եթե ի վիճակի ենք սպասարկել չվնասելով մեր բարեկեցությունը՝ ապա պետք է օգտվել այդ վարկերից:

-Պարոն Բագրատյան, այստեղ խնդիրն այն է, որ այսօրվա Կառավարության ղեկավար Նիկոլ Փաշինյանը ընդդիմադիր պատգամավոր եղած ժամանակ քննադատում էր նախկին կառավարություններին՝ պետական պարտքը ավելացնելու համար, սակայն հիմա ինքն է նույն քաղաքականությամբ առաջնորդվում:

Ցանկացած գործընթաց ունի քաղաքական եւ տնտեսական բաղադրիչ: Բոլոր ժամանակներում էլ ընդդիմության դերը իշխանությանը քննադատելն է եւ պարտադիր չէ, որ դա խոր վերլուծության արդյունք լինի: Իսկ իշխանությունը պարտավոր է բացատրել եւ հիմնավորել վարած քաղաքականությունը՝ բացատրելով, որ տվյալ վարկը պետք է բոլորիս:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տաղավարում քաղաքացիներ Հմայակ Սահակյանը եւ Կարապետ Գրիգորյանն են, որոնք պնդում են, որ իրենց սեփականություն հանդիսացող հողատարածքը, 2013 թվականին ճանաչվելով հանրային գերակա շահ, օտարվել է: Հողամասը, որը ձեռք է բերել պետությունը, նպատակի համար չի օգտագործվել, եւ քաղաքացիները փորձում են հետ բերել հողամասը:

Քաղաքացիները «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշում են, որ 2023 թվականին Մասիսի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանը նշված հողային տարածքները վաճառել է գրեթե 20 մլն դրամով եւ աճուրդի մասին հայտարարությունը եղել է օրենքի խախտումներով եւ չի եղել պատշաճ հրապարակում:

Քաղաքացիները պնդում են, որ հողը ձեռք է բերել Անդրանիկ Օսիպյանը, ով Համբարձումյանի ընկերներից է եւ Մասիսի համայնքում մի քանի հողամասեր է նման կերպ ձեռք բերել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Մասիսի համայնքապետ Դավիթ Համբարձումյանը նշեց, որ համայնքն իրավասու չէ պետական սեփականության հողը վաճառել կամ աճուրդի հանել: Քանի որ Համբարձումյանը պատշաճ իրազեկված չէր, հավելյալ տեղեկություն չկարողացավ տալ:

Հարցին, թե արդյոք Օսիպյանը, ով սեփականաշնորհել է նշված հողամասը, իր մերձ շրջանակից է՝ չհերքեց, այլ հաստատեց:

ԿՈՆՋՈՐՅԱՆԸ՝ Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆԻ ՊԱՀՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը չի հերքում՝ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի վարքագիծը քննության կառնվի:

«Ես գիտեմ, որ այդ հարցով որոշակի ընթացք է լինելու»,- երեկ ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում ասաց նա:

Հաշվի առնելով, որ Քյարամյանը ՔԿ նախագահն է, իսկ ինքը կառավարող խմբակցության ղեկավարը՝ Կոնջորյանը ճիշտ չհամարեց, որ այդ մասով իր մեկնաբանությունները տա:

Հարցին՝ կաշկանդվա՞ծ է՝ արձագանքեց. «Կաշկանդված չեմ, ընդհակառակը, եթե հիմա մեկնաբանություններ տամ, կարող է դիտվել մեր կողմից կաշկանդող հայտարարություն»:

Նշենք, որ ԱԺ-ում ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի եւ ՔԿ ղեկավար Արգիշտի Քյարամյանի մասնակցությամբ միջադեպի փաստով քրեական վարույթ է նախաձեռնվել:

Հիշեցնենք՝ Ազգային ժողովում սկանդալ էր եղել ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի ու ՔԿ նախագահ Արգիշտի Քյարամյանի միջեւ: Աղազարյանը Քյարամյանին դիմել էր «արա»-ով, ՔԿ նախագահն էլ արձագանքել էր՝ «ոտքից գլուխ արա ես»:

ԱԺ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Ազգային ժողովի խորհուրդը հոկտեմբերի 29-ին գումարել է արտահերթ նիստ: Այն վարել է Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը:

Խորհուրդը համաձայնություն է տվել 2024 թվականի հոկտեմբերի 31-ին՝ ժամը 13:00-ին, նախաձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելուն:

Ազգային ժողովի խորհրդի որոշմամբ լրացում եւ փոփոխություն են կատարվել 2024 թվականի հոկտեմբերի 21-ի ԱԺԽՈ-050-Լ որոշման մեջ:

ՋԱՆՔԵՐ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ

Ադրբեջանն ու Հայաստանն անկեղծ ջանքեր են գործադրում տարածաշրջանում խաղաղության համար: Այս մասին հայտարարել է Թուրքիայի նախագահ Էրդողանը՝ հիշեցնելով, որ հոկտեմբերի 18-ին Ստամբուլում տեղի է ունեցել «3+3» հարթակի նախարարական նիստը:

«Ակնհայտ է, որ հարթակն արդյունավետ է, եւ մենք ցանկանում ենք այն վերափոխել ինստիտուցիոնալ հարթակի: Մենք տեսնում ենք եղբայրական Ադրբեջանի եւ Հայաստանի ջանքերն այդ ուղղությամբ, եւ Անկարան կհետեւի գործընթացին: Այժմ կա եզակի հնարավորություն տեւական խաղաղության համար: Մենք կշարունակենք համակարգված աշխատել մեր ադրբեջանցի եղբայրների հետ»,- ասել է նա:

ՄԻԵԴ-ՈՒՄ ՀՀ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆՈՐ ՑՈՒՑԱԿ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել՝ հաստատելով ՄԻԵԴ դատավորի պաշտոնում Հայաստանի առաջադրած թեկնածուների նոր ցուցակը:

«Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16.1-ին մասը՝ հաստատել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների նոր ցուցակը՝ հետեւյալ կազմով.

1) Գրիգորյան Վահե
2) Կարապետյան Նորա
3) Մարգարյան Աննա»,- նշված է Փաշինյանի ստորագրած որոշման մեջ:

ԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ

Մոտ ժամանակներս հնարավոր է՝ հայկական ու ադրբեջանական կողմերը հանդիպում անցկացնեն գերիների եւ անհետ կորածների հարցով: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ ԱԱԾ տնօրեն Արմեն Աբազյանը՝ նշելով, որ հանդիպումը, հավանաբար, հանձնաժողովների կազմով տեղի կունենա, վայրն էլ դեռեւս որոշված չէ:

Ժամկետների մասին, ինչպես նշեց Աբազյանը, հավելյալ կտեղեկացնեն:

«Արդյունքների մասով եկեք չշտապենք հայտարարություն անել»,- ասաց նա՝ պատասխանելով հարցին, թե այդ հանդիպումից հնարավո՞ր է արդյոք ակնկալել որոշակի արդյունքներ:

ԱՎԵԼԻ ՔԱՆ 440 ՀԱԶ. ՄԱՐԴ ԼՔԵԼ Է ԼԻԲԱՆԱՆԸ

Առնվազն 440 հազար մարդ լքել է Լիբանանը այն բանից հետո, երբ սեպտեմբերի վերջին սկսվեց Իսրայելի ռազմական գործողությունը շիական «Հըզբոլլահ» շարժման դեմ: Այս մասին հայտնում է Լիբանանում ՄԱԿ-ի հումանիտար հարցերի համակարգման գրասենյակը (OCHA):

Ինչպես նշվում է զեկույցում, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի եւ Սիրիայի Կարմիր մահիկի ընկերության տվյալներով՝ սեպտեմբերի 23-ից ի վեր Լիբանանից Սիրիա է հատել սահմանը մոտ 440 հազար մարդ:

Փաստաթղթում նշվում է նաեւ, որ Իրաք է ժամանել եւս 22 հազար լիբանանցի:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կանադան հայտարարել է Վրաստանի կառավարության հետ հարաբերությունների վերանայման մասին, գրում է newsgeorgia.ge կայքը:

Երկիրը մտահոգություն է հայտնել դիտորդների կողմից ընտրական խախտումների բազմաթիվ դեպքերի մասին հաղորդումների վերաբերյալ:

Մինչդեռ apsny.ge կայքը գրում է, որ Շվեդիան դադարեցնում է համագործակցությունը Վրաստանի հետ պետական մարմինների մակարդակով:

ՀԱՐՎԱԾ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎՐԱ

Չեչնիայի տարածքում առաջին անգամ անօդաչու թռչող սարքի հարձակում է տեղի ունեցել. անհայտ անօդաչու թռչող սարքերը հարձակվել են տեղի հատուկ նշանակության համալսարանի վրա: Այս մասին հաղորդում են տելեգրամյան ալիքները:

Չեչնիայի ղեկավար Ռամզան Կադիրովի խոսքով՝ անօդաչու թռչող սարքը հարվածել է ռուսական հատուկ նշանակության ուժերի համալսարանի տարածքում գտնվող դատարկ շենքին: Հարձակումից հետո տանիքը բռնկվել է: Զոհեր եւ վիրավորներ չկան:

ՓԵԶԵՇՔԻԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը հայտարարել է, որ իր երկիրը պատերազմի չեն ձգտում, բայց պաշտպանելու է իրանցի ժողովրդի իրավունքները:

Ինչպես փոխանցում է IRNA-ն, ընդգծելով Իսրայելին պատասխանելու Իրանի իրավունքը, այս մասին Մասուդ Փեզեշքիանն ասել է կառավարության նիստում, այն բանից հետո, երբ իսրայելական կողմը հարվածներ է հասցրել իրանական ռազմական օբյեկտներին:

Իրանի նախագահը նախազգուշացրել է, որ լարվածությունը կսրվի, եթե Իսրայելը շարունակի շարունակի իր գործելաոճը:

ՈՒՄ Է ՓՆՏՐՈՒՄ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱՆԻՆ

Ազգային ժողովում Արգիշտի Քյարամյանի հայտարարության վերաբերյալ քրեական վարույթ է նախաձեռնվել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել են ՀՀ գլխավոր դատախազությունից:

Իսկ որն էր Արգիշտի Քյարամյանի հայտարարությունը, որն էր այն գործը, որի համար Քյարամյանին դիմել են Աղազարյանի որդու մասով:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ քննչական կոմիտեն արգելանքի տակ է վերցրել պատգամավորի որդու ընկերությանը պատկանող մի քանի մեքենաներ:2023 թվականի օոգոստոսի 1-ին ՀՀ քննչական կոմիտեին պաշտոնապես հայտնել էր, որ կոմիտեի հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչությունում շարունակվում է «Ավտոներկրողներ», «Ավտոներկրողների միություն» եւ «Ավտոներկրող-4» ՍՊ ընկերությունների գործունեության արդյունքում թույլ տրված չարաշահումների դեպքերի առթիվ քրեական վարույթով նախաքննությունը: Քննությամբ ձեռք բերված տվյալներով պարզվել է, որ Տ.Հ.-ն, հանդիսանալով պետական գրանցում ստացած վերոնշյալ ընկերությունների գործունեությունը փաստացի ղեկավարող անձ եւ փաստացի սեփականատեր, ընկերությունների միջոցով նպատակադրված լինելով պետությունից խարդախությամբ հափշտակելու առանձնապես խոշոր չափերի գումարներ, համաձայնության է եկել ավտոմեքենաների ներմուծմամբ զբաղվող բազմաթիվ ֆիզիկական անձանց հետ՝ իր ընկերության անվամբ վերջիններիս պատկանող ֆինանսական միջոցներով ավտոմեքենաներ ներկրելու եւ ԵԱՏՄ երկրներ արտահանելու հարցի շուրջ, պայմանով, որ վերադարձման ենթակա ԱԱՀ-ի հիսուն տոկոս գումարը մնալու է իրեն՝ որն էլ եղել է նրա օգուտը, իսկ մյուս հիսուն տոկոսը տրվելու է ֆիզիկական անձանց: Համաձայնության շրջանակներում ֆիզիկական անձանց տրված լիազորագրերի հիման վրա 2020-2023 թվականների ընթացքում ֆիզիկական անձանց կողմից ներգրավված ֆինանսական միջոցներով տարբեր երկրներից հիշյալ ընկերությունների անվամբ ներկրվել է շուրջ 8.447 տրանսպորտային միջոց, որոնց մի մասն արտահանվել է ԵԱՏՄ անդամ երկրներ, եւ դրանց վերաբերյալ առուվաճառքի պայմանագրերում փաստացի խեղաթյուրվել են գործարքի իրական շահառուի, վաճառքի իրական գների տվյալները:

Ձեռք բերման գնից պակաս ցույց տալու արդյունքում՝ հիշյալ ընկերությունների կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացված հաշվարկ-հաշվետվություններում արհեստականորեն առաջացել են 5մլրդ. 700մլն. ՀՀ դրամի չափով հարկային վնասներ, իսկ ԱԱՀ-ի հաշվետվություններում, խարդախությամբ հափշտակելու նպատակով, ձեւավորել են վերադարձման ենթակա 3մլրդ. 868մլն. դրամի չափով ԱԱՀ-ի դեբետային գումարներ:

Ընկերությունները, վերոգրյալ գործարքներն իրականացնելով, իրականում ոչ թե իրականացրել են ձեռնարկատիրական գործունեություն, այլ նպատակ են ունեցել ձեռնարկատիրական գործունեության քողի ներքո պետությունից կատարելու հափշտակություն:

Դատելով իրավիճակից՝ հենց այս քրեական գործով են զանգահարել քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին, ինչի մասին էլ նա հրապարակային բացահայտում արեց Ազգային ժողովում:

Այժմ Գլխավոր դատախազությունը փնտրում է, թե ով է զանգել Արգիշտի Քյարամյանին:

Կարելի է ենթադրել նաեւ, որ որդու քրեական գործի պատճառով ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի գլխին սեւ ամպեր են կուտակված: Սպասենք Դատախազության հետագա քայլերին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՀԵՌԱՑՆԵ՞Ն ՊԱՇՏՈՆԻՑ. ԽՄՈՐՈՒՄՆԵՐ՝ ԱԺ–ՈՒՄ

Ազգային ժողովի իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի շարք անդամներ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ երեկ նախատեսված նիստում պատրաստվում էին բարձրացրել Անդրանիկ Քոչարյանին պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից հեռացնելու հարցը:

«Ազատության» աղբյուրի փոխանցմամբ՝ խմբակցությունից շատերը, այդ թվում՝ առանցքային անդամներ, կողմ են Քոչարյանին պաշտոնանկ անելուն, բայց դեռ այդ հարցը պետք է քննարկվի Փաշինյանի հետ: Քոչարյանը տեղյակ է թիմակիցների մտադրության մասին:

Այս պահին նրան հեռացնելու հիմնավորումները դեռ հստակ ձեւակերպված չեն, կհաջողե՞ն ՔՊ-ականներն իրենց թիմակցին հեռացնելու հարցում, թե՞ ոչ, դեռ պարզ չէ: «Ազատության»-ը փոխանցել են, որ որոշումը, ըստ էության, կախված է վարչապետից:

Մեկ օր առաջ նախատեսված վարչության նիստը տեղի չունեցավ ԱԺ-ում 2025-ի բյուջե քննարկումների պատճառով: Թե երբ տեղի կունենա նիստը, դեռ հստակ չէ:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՋՈՒ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔԻՑ ԴԵՌ ՀԱՐՑԱԿԱՆ Է

ՀՀ իշխանությունների հավաստիացումներն ու պնդումները, թե Ադրբեջանի ՋՈՒ-ն սահմանազատման արդյունքում դուրս է բերվելու ՀՀ ինքնիշխանության տարածքից, որեւէ լուրջ հիմնավորում չունեն:

Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Հայաստանյան իշխանությունների հավաստիացումներն ու պնդումները, թե ադրբեջանական զորքերը սահմանազատման արդյունքում, ինչ-որ փուլում, դուրս են բերվելու ՀՀ ինքնիշխանության տարածքից, որեւէ լուրջ հիմնավորում չունեն:

Նույնիսկ կնքված փաստաթղթերի, միջազգային բանաձեւերի կամ միջազգային իրավունքի առկայությունը տարբեր երկրների հետ չի կանգնեցնում ագրեսիայի դիմելուց, այլ երկրի տարածքներ օկուպացնելուց ու ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Այս ամենի համատեքստում Հայաստանի իշխանության ձեռք բերած պայմանավորվածությունները նույնիսկ փաստաթղթային առումով են խոցելի ու Ադրբեջանի համար՝ ըստ իրավիճակի գործելու հնարավորություն են տալիս:

Սահմանազատման կանոնակարգում հենց միայն հատվածական սահմանազատման դրույթի առկայությունն արդեն ական է, որը ցանկացած պահի կարող է պայթել ու իրադարձություններն անկանխատեսելի հուն տեղափոխել»,- գրել է նա:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է 5 ԱՆՁ

ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՀՀ ֆինչական կոմիտեի ԵՔՔՎ ծանր հանցագործությունների ֆինության բաժնում ավարտվել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ստանալու, խմբավորումը ղեկավարելու եւ մասնակցելու, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը՝ 5 մեղադրյալի մասով:

Նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Հ.Խ.-ն, ստանալով «քրեական հեղինակության» քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ», հանդիսանալով քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորման՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամ, իր անօրինական ազդեցությունն օգտագործելու եւ սպառնալիքի միջոցով ստանձնել է մասնավոր, այն է՝ պարտք մնացած գումարի վերադարձման, ինչպես նաեւ այլ խնդիրներին վերաբերող վեճերն իրեն դիմած անձանց օգտին լուծելու հարցեր:

Քննությամբ հիմնավորվել է, որ տարբեր անձինք իրենց հերթին, այդ թվում՝ Պ.Ս.-ն, ստանալով եւ կատարելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանն ուղղված գործողություններ կատարելու մասին հանձնարարությունները, մասնակցել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը, ինչպես նաեւ ներգրավված են եղել դրա կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը:

Տարբեր քաղաքացիներ իրենց հերթին, իրենց ենթադրյալ իրավունքներն իրացնելու, մասնավոր հարցերին առնչվող վեճերն անօրինական ազդեցությունն օգտագործելով լուծելու համար, դիմել են քրեական աստիճանակարգության բարձրագույն՝ «քրեական հեղինակության» կարգավիճակ ունեցող վերոհիշյալ անձին:

2023թ. դեկտեմբերի 26-ին որպես քրեական հեղինակության՝ Հ.Խ.-ին դիմել է վերջինիս ծանոթը՝ որդու եւ նրա ընկերոջ մտերիմների վեճը լուծելու խնդրանքով: Հ.Խ.-ն ընդունել է իրեն դիմած անձի որդուն եւ վերջինիս ընկերոջը եւ առաջացած մասնավոր վեճը լուծելու նպատակով քննարկել վիճաբանության մասնակից անձի կողմից մեկ այլ՝ «Մասիվցի Ժիրո» մականվամբ անձին դիմելու եւ նշված անձի օգտին մասնավոր հարցին լուծում տալու հետ կապված հարցերը: Դրա ընթացքում Հ.Խ.-ն, պարզաբանելով քրեական աշխարհում ընդունված ավանդույթներով եւ կանոններով գործելու անհրաժեշտությունը, պատրաստակամություն է հայտնել տվյալ հարցի հետ կապված զրուցել «Մասիվցի Ժիրոյի» հետ եւ անօրինական ճանապարհով, օգտագործելով իր քրեական հեղինակությունը, իրեն դիմած նշված երկու անձանց օգտին լուծել վեճը:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Հ.Խ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով, 324-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, նրա նկատմամբ, որպես խափանման միջոց, համակցված կիրառվել է տնային կալանք, գրավ՝ 5.000.000 ՀՀ դրամ եւ բացակայելու արգելք:

Պ.Ս.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց համակցված կիրառվել է վարչական հսկողությունը, գրավ՝ 15.000.000 ՀՀ դրամ եւ բացակայելու արգելք:

Վերջիններիս դիմած երեք անձանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով: Նրանցից երկուսի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է բացակայելու արգելք, իսկ մեկի նկատմամբ՝ վարչական հսկողություն եւ բացակայելու արգելք:

Հինգ մեղադրյալի մասով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակից, քննությամբ դեռեւս չպարզված անդամների մասով նախաքննությունը շարունակվում է:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՌԴ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողություններով պարզվել են Երեւան քաղաքում օտարերկրացու նկատմամբ ավազակություն կատարելու դեպքի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը: ՌԴ քաղաքացին հաղորդում է տվել այն մասին, որ 2024 թվականի հոկտեմբերի 17-ին՝ ժամը 21:50-ի սահմաններում, Երեւան քաղաքի Կասկադ համալիրի աստիճանահարթակի մոտ անհայտ անձը, զենքի նմանվող առարկայով սպառնալիքներ է հնչեցնելով, իրենից պահանջել է բջջային հեռախոս եւ գումար, ինչին ի պատասխան, վախի ազդեցության ներքո, ենթարկվելով սպառնալիքներին, ինքը տվել է իրեն պատկանող «Այֆոն 13» մոդելի բջջային հեռախոսը եւ կանխիկ գումար, որից հետո անհայտ անձը դիմել է փախուստի:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում ՌԴ քաղաքացին ճանաչվել է տուժող եւ հարցաքննվել դեպքի հանգամանքների շուրջ:

Նախաքննության ընթացքում իրականացվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում տուժողը մատնացույց է արել հստակ վայրը, որտեղ դեպքը տեղի է ունեցել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, ով Արմավիր քաղաքի 25-ամյա բնակիչ է:

Նախաքննության ընթացքում առգրավվել են դեպքի վայրի հարակից հատվածներում առկա տեսանկարահանող սարքերի տեսագրությունները, որոնք զննության են ենթարկվել տուժող մասնակցությամբ:

25-ամյա երիտասարդի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել:

Որոշում է կայացվել՝ վերջինիս ձերբակալելու մասին, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ՝ ՊՆ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարչական տույժ է կիրառել ՀՀ պաշտպանության նախարարի նախկին խորհրդական Սուրեն Ալյոշայի Հարությունյանի նկատմամբ:

Համաձայն Azdarar.am-ի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած վարույթների մասին հաշվետվության՝ ՀՀ պաշտպանության նախարարի նախկին խորհրդական Սուրեն Հարությունյանի կողմից «Հանրային ծառայության» մասին օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների եւ ծախսերի հայտարարագրի ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու հիմքով կիրառել վարչական տույժ: Կիրառված վարչական տույժը սահմանվել է նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝200 հազար ՀՀ դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՊԱՀԱՆՋ՝ 15 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԲՌՆԱԳԱՆՁԵԼՈՒ

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 24-ին վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը, հայտնում են ՀՀ գլխավոր դատախազությունից:

«Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ Ազգային ժողովի նախկին փոխնախագահ Միքայել Մելքումյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

15 անշարժ գույք.

2 տրանսպորտային միջոց.

1 իրավաբանական անձում մասնակցություն.

Շուրջ 315 միլիոն դրամ»,-նշված է հաղորդագրության մեջ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՎՏՈՎԹԱՐԻՑ

Հոկտեմբերի 26-ին ողբերգական ավտովթարից մահացել էր երգչուհի Մաշ Իսրայելյանի քույրը՝ Էլեն Իսրայելյանը:

Շամշյանի հաղորդմամբ՝ ժամը 03:45-ի սահմաններում, Էլեն Իսրայելյանը «BMW»-ով Մազմանյան փողոցում բախվել է բազալտե եզրաքարերին, անցել շրջանաձեւ հատվածի կանաչ զանգվածի վրայով, բախվել երկաթե էլեկտրասյանը եւ հայտնվել երթեւեկելի գոտում: Նա եւ Երեւանի բնակիչ 37-ամյա Արսեն Խաչատրյանը ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել էին հիվանդանոց:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հայտնի երգչուհու քրոջ վթարի դեպքով նշանակվել է դատատեխնիկական, դատաբժշկական փորձաքննություն, որպեսզի պարզեն վթարի հանգամանքները՝ արդյոք մեքենայի անսարքությունն է եղել պատճառը, թե ոչ, կամ արդյոք վարորդը եղել է սթափ վիճակում:

Ասել է թե՝նախաքննական մարմինը երկու վարկած է առաջ քաշում ողբերգական վթարի դեպքով՝կամ վարորդը սթափ վիճակում չի եղել, կամ մեքենան անսարք է եղել:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 28-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 45 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՐԵՆՑ ՈԼՈՐՏԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ ԵՆ

Պետական բյուջեից բարձր աշխատավարձեր, մեծ պարգեւավճարներ ստացող Տավուշի մարզպետի աշխատակազմն անմիջականորեն ղեկավարում է մարզի ընդամենը երկու ոլորտ՝ պետական հանրակրթությունը, եւ մարզի պետական առողջապահական հիմնարկները: Այդ ղեկավարումն էլ մարզպետարանն իրականացնում է ԿԳՄՍ-ի եւ առողջապահության նախարարության հետ համատեղ: Տավուշի մարզպետարանում տեղյակ չեն, թե ինչ վիճակում են գտնվում իրենց ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների շենքերը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝նրան հարցնելով՝2024 թվականի հոկտեմբերի 10-ի դրությամբ Տավուշի մարզի հանրակրթական ո՞ր դպրոցների շենքերն ունեն հիմնանորոգման, որոնք՝ վերանորոգման, որոնք՝ մասնակի նորոգման կարիք: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շենքերի հիմնանորոգման, վերանորոգման եւ մասնակի նորոգման վերաբերյալ ցուցակները դեռեւս հաստատված չեն»:

ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ

Տավուշի սահմանագոտում կառուցվող ամրությունների շինարարությունում ընդգրկված են սահմանամերձ գյուղերի բնակիչներ, նաեւ՝ մեծ թվով հնդիկներ: Հնկաստանի քաղաքացիներին այդ գործում ներգրավել են որպես էժան վարձատրվող աշխատանքային ուժ: Տավուշցի բանվորների վկայությամբ՝ շինարարական կազմակերպություններն իրենց օրական 12 հազար դրամ են վճարում: Թե որքան են վճարում հնդիկներին, հայտնի չէ, սակայն հնդիկներին, ռոճիկից զատ, նաեւ ճաշ են տալիս: Տավուշցի բանվորների խոսքերով՝ սահմանագոտում ընթացող շինարարություններում աշխատող հնդիկները քիչ թե շատ խոսում են հայերեն, նրանցից ոմանք կրթված են, հաշվարկում են այդ շինարարությունում օգտագործվող ամրանների, այլ շինանյութերի պահանջվող քանակը: Անցած շաբաթ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը լրագրողների խումբ էր տարել Տավուշի սահմանագոտի, նախարարը լրագրողներին ցո՞ւյց է տվել սահմանագոտում աշխատող հնդիկ բանվորներին:

ՎՏԱՆԳ՝ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Իջեւան քաղաքի բնակիչները «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողին բողոքել են, որ քաղաքի շուկայի դիմացի հետիոտնային անցումի սպիտակ շերտերը շատ հաստ են սարքված, որի հետեւանքով առաջացել են անցումի սպիտակ շերտերի ելուստներ: Վերջերս մի կին ոտքով դիպել է դրան. կինն ընկել, գլուխն արյունոտվել է: Նման դեպքերը կարող են կրկնվել, քանզի հետիոտները այդտեղով անցնելիս չեն կարող ենթադրել, որ գոյություն ունի նման վտանգ, եւ հատուկ ուշադրություն չեն կարող դարձնել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արցախ Միությունը դատապարտել եւ հրապարակել է զեկույց ու առաջարկություններ բռնի տեղահանված արցախցիների համար ՀՀ կառավարության բնակարանային ծրագրի վերաբերյալ, իսկ Արցախի ժողովրդի կարիքների ապահովման նախաձեռնությունը, բաղկացած շուրջ 40 հասարակական կազմակերպություններից, աջակցություն է հայտնել փաստաթղթին:

Զեկույցը պարունակում է 2024թ. մայիսի 16-ին ընդունված ծրագրի հիմնական սկզբունքների վերլուծություն, առկա իրավիճակի հակիրճ նկարագրություն եւ գործող ծրագրի էականորեն լավարկման առաջարկներ՝ համապատասխան հիմնավորումներով ու հավելվածներով:

Ծրագրի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ եւ մարտահրավերներ, որոնք խոչընդոտում են դրա արդյունավետ իրականացմանը: Այդ խնդիրները կարելի է դասակարգել մի քանի հիմնական խմբերի, մասնավորապես.

Ցածր դիմելիություն. հոկտեմբերի սկզբի դրությամբ՝ Ծրագրին դիմել եւ վկայագիր է ստացել շուրջ 30 ընտանիք, ինչը կազմում է ընդհանուր թիրախային խմբի ընդամենը 0.12%-ը: Այս ցածր ցուցանիշը վկայում է ծրագրի մատչելիության կամ պայմանների հետ կապված խնդիրների մասին:

Ֆինանսական խոչընդոտներ. գործող ծրագրով հաշվի չի առնվում բնակարանների շուկայական գների իրական պատկերը: Հատկապես Երեւանում եւ այլ քաղաքներում առաջարկվող աջակցության չափը բավարար չէ արժանապատիվ բնակարանային պայմաններ ապահովելու համար, իսկ բնակելի տան կառուցման պայմանները գլխավորապես չեն համապատասխանում նույնիսկ պետական լիազոր մարմնի կողմից հաստատված նախագծերի նվազագույն արժեքներին:

Իրավական խոչընդոտներ. Ծրագրի որոշ պահանջներ, օրինակ՝ դիմելու պահին ՀՀ քաղաքացիության պահանջը, խոչընդոտում են շահառուների մասնակցությանը, իսկ մի շարք այլ դրույթներ առաջացնում են տարբեր խմբերի անձանց իրավունքների խախտումներ, որոնք երբեմն հակասում են նույնիսկ ՀՀ Սահմանադրությանը:

Հատուկ կարիքներ ունեցող խմբերի անտեսում. Գործող ծրագիրը բավարար չափով հաշվի չի առնում հատուկ կարիքներ ունեցող խմբերի, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց եւ զոհված զինծառայողների ընտանիքների կարիքները:

Վարկավորման հետ կապված խնդիրներ. Շատ շահառուներ դժվարություններ ունեն լրացուցիչ հիփոթեքային վարկեր ստանալու հարցում, հատկապես եթե նախկինում ունեցել են վարկային պարտավորություններ եւ, հիմնականում իրենց կամքից անկախ պատճառներով, խնդիրներ ունեն վարկային պատմության հետ:

Վերոնշյալ եւ մի շարք այլ խնդիրների համակարգային ու հիմնարար լուծման համար փաստաթուղթն առաջարկում է ողջամիտ ու արդյունավետ լուծումներ՝միաժամանակ ներկայացնելով փաստական ու իրավական հիմնավորումներ դրանց օգտին:

Արցախ Միությունը եւ Արցախի ժողովրդի կարիքների ապահովման նախաձեռնությունն ակնկալում են, որ ՀՀ կառավարությունը հաշվի կառնի սույն առաջարկները, ինչպես նաեւ արագ կերպով կմեկնարկի իրական ու արդյունավետ հանրային քննարկումներ ծրագրի հիմնարար բարելավման համար:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆ ԹՌՉՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԳՈՐԾԱՐԱՆ

Չինական XPeng ավտոարտադրողը սկսել է թռչող մեքենաների գործարանի կառուցումը Չինաստանի հարավում գտնվող Գուանչժոու նահանգում: Ինչպես հաղորդում է Xinhua-ն, սա կլինի աշխարհում առաջին նման գործարանը, որն ունի լայնածավալ արտադրություն:

Արտադրության առաջին փուլում 10 000 հեկտար տարածքով գործարանը կարտադրի թռչող մոդուլ Land Aircraft Carrier (LAC) մեքենայի համար: Գործարանը տարեկան կկարողանա արտադրել մոտ 10 հազար նման մոդուլ:

Ընկերությունը LAC-ը կներկայացնի Չժուհայ քաղաքում Airshow China-ում: Միջոցառումը տեղի կունենա նոյեմբերի 12-ից 17-ը: Սպասվում է, որ թռչող մոդուլն այնտեղ կիրականացնի իր առաջին հանրային թռիչքը:

Հունիսին ճապոնական Nikkei Asia հրատարակությունը հայտնել էր, որ չինական Գուանչժոու քաղաքի իշխանությունները նախատեսում են մինչեւ 2027 թվականը ներդնել 10 միլիարդ յուան (1,4 միլիարդ դոլար) թռչող մեքենաների ենթակառուցվածքի զարգացման համար:

ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ՄԱՄՆԱԳԵՏԸ

Ի՞նչ է բրոնխային ասթման. շնչուղիների քրոնիկ բորբոքային հիվանդություն է, որը բնութագրվում է շնչուղիների կրկնվող բորբոքումով, դիտվում է շնչառության դժվարացում, հազ եւ խզզոց: Ներկայացնում է ալերգոլոգիայի գծով ԱՆ խորհրդատու Արմինե Հակոբյանը:

Շնչառական համակարգը գրիպի ժամանակ հայտնվում է թիրախում, եւ ասթմա ունեցող մարդիկ ավելի խոցելի են դառնում. կարող են սրել հիվանդության ախտանիշները եւ բարդացնել ասթման՝ առաջացնելով լուրջ բարդություններ, ինչպիսիք են թոքաբորբը, շնչառական անբավարարությունը:

Գրիպի դեմ տարեկան պատվաստումը կարեւոր կանխարգելիչ միջոց է ասթմա ունեցող մարդկանց համար: Պատվաստանյութն աշխատում է՝ խթանելով իմունային համակարգը արտադրելու հակամարմիններ գրիպի վիրուսի դեմ, ինչը կանխում է վարակը կամ նվազեցնում դրա ծանրությունը: Քանի որ գրիպի վիրուսը պարբերաբար փոխվում է, պատվաստանյութի կազմը ամեն տարի թարմացվում է՝ առավել տարածված շտամներից պաշտպանելու համար:

Բազմաթիվ կլինիկական հետազոտություններ հաստատում են, որ գրիպի դեմ պատվաստումը արդյունավետ է ասթմա ունեցող անձանց, այդ թվում երեխաների մոտ ծանր հետեւանքները կանխելու առումով եւ պատվաստումներից հետո ասթմայի սրացումների զգալի աճ չի նկատվել: Իրականում, գրիպով վարակվելու բարդությունների ռիսկը շատ ավելի մեծ է, քան պատվաստանյութի հետ կապված ցանկացած փոքր ռիսկ:

Այսպիսով՝ գրիպի դեմ պատվաստումը ոչ միայն օգուտ է տալիս ասթմա ունեցող մարդկանց, այլեւ նպաստում է հանրային առողջությանը՝ ձեւավորելով կոլեկտիվ իմունիտետ:

Երբ բնակչության զգալի մասը պատվաստվում է, գրիպի տարածումը դանդաղում է, ինչը անուղղակիորեն պաշտպանում է այն մարդկանց, ովքեր ունեն իմունային խանգարումներ, այդ թվում՝ ծանր ասթմա ունեցող անձինք, որոնք կարող են պատվաստմանը լավ չարձագանքել:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 1 մարդ մահացել է, 12-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչությունը տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի շրջանակում օրերս բացահայտել է շուրջ 1,2 մլրդ դրամի ստվերային շրջանառություն:

Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչության տարածքային թիվ 11 բաժին տեղեկություններ էին ստացվել առ այն, որ Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ փողոցում գործող շինանյութի մանրամեծածախ առեւտուր իրականացնող ընկերությունը վաճառված ապրանքների դիմաց գանձում է կանխիկ գումար եւ չի տրամադրում ՀԴՄ կտրոն, ինչի արդյունքում խուսափում է առանձնապես խոշոր չափերով հարկեր վճարելուց:

Օպերատիվ տվյալներն իրացնելու նպատակով ձեռնարկված համակողմանի եւ մեծածավալ օպերատիվ- հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված օպերատիվ տվյալները հաստատվել են:

Ձեռնարկված միջոցառումների շրջանակում հետազոտվել են ընկերության հաշվապահական հաշվառման փաստաթղթերը եւ աշխատանքային համակարգիչներում առկա տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկությունները, որոնց արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ 2021-2024 թվականների ընթացքում ընկերության կողմից թաքցվել է շուրջ 1,2 մլրդ դրամի իրացման շրջանառություն:

Ձեռքբերված փաստական տվյալների հիմքով կատարվել է պետությանը պատճառված վնասի նախնական հաշվարկ, համաձայն որի՝ պետությանը պատճառվել է շուրջ 354 մլն դրամի վնաս:

Դեպքի առթիվ հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քրեական վարույթի շրջանակում կատարվել են խուզարկություններ, առգրավվել են վարույթի համար կարեւոր նշանակություն ունեցող փաստաթղթեր, համակարգիչներ եւ էլեկտրոնային կրիչներ: Ձեռքբերված փաստերի հիման վրա միջնորդություն է ներկայացվել դատարան՝ ընկերության տնօրենի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

ԿԱՍՊԵՐՍԿԻ

ԴԱՐՔՆԵՏՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 10 ՄԼՆ ԳՈՂԱՑՎԱԾ ԳԱՂՏՆԱԲԱՌ

«Կասպերսկի» ընկերության Հայաստանի ներկայացուցչություն: Kaspersky Digital Footprint Intelligence (DFI) թիմն ուսումնասիրել է դարքնետում եւ ստվերային մարկետփլեյսերում 2024-ի առաջին կիսամյակում արված հայտարարությունները՝ Մերձավոր Արեւելքի երկրների կազմակերպությունների եւ պետական հաստատությունների հիմնական կիբերսպառնալիքները բացահայտելու համար:

«Կասպերսկի» ընկերությունը տեղեկացնում է, որ ինֆոստիլերների օգնությամբ չարագործները ձգտում են հնարավորինս շատ գաղտնի տվյալներ հավաքել վարակված սարքերից: Հաշիվների մուտքանունները եւ գաղտնաբառերը մեծ պահանջարկ ունեն: Kaspersky DFI-ի փորձագետները դարքնետում հայտնաբերել են գրեթե 10 միլիոն նման կապակցություն, որոնք հրապարակվել են 2024-ի առաջին վեց ամիսներին: Դրանք հիմնականում Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի եւ ԱՄԷ-ի տարբեր ընկերությունների աշխատակիցների կամ այդ թվում պետական ծառայությունների օգտատերերի հաշվառման տվյալներ են:

Արտահոսած տվյալները կարող են օգտագործվել տարբեր խարդախ գործողություններ՝ շանտաժից մինչեւ թիրախային գրոհներ իրականացնելու համար: 2024-ի առաջին կիսամյակում չարագործները դարքնետում եւ ստվերային ֆորումներում տեղադրել են Մերձավորարեւելյան ընկերությունների կորպորատիվ տվյալների 125 բազա: Արտահոսքերի ամենամեծ քանակով երկրների թվում են Սաուդյան Արաբիան, Իրաքը եւ Եգիպտոսը:

Kaspersky DFI-ի փորձագետների տվյալներով՝ ծածկագրող ծրագրերի օգտագործմամբ գրոհներ կազմակերպող կիբեռխմբերը դարձել են ավելի կազմակերպված եւ կառուցվածքավորված: 2024-ի առաջին կիսամյակում Մերձավոր Արեւելքում գործել է առնվազն 19 նման խումբ: Ներկայության հիմնական երկրներն են ԱՄԷ-ն եւ Սաուդյան Արաբիան: Առավել ակտիվ են Lockbit 3.0-ն, Stor2ous-ը, Rhysida-ն եւ Qilin-ը: Առավել հաճախ գրոհների ենթարկված ոլորտների թվում են պետական կազմակերպությունները, շինարարական եւ խորհրդատվական ընկերությունները:

Գաղափարաբանությամբ մոտիվացված հաքտիվիստական գործունեությունը թափ է հավաքում: Ընդունված է համարել, որ առավել հաճախ հաքտիվիստները կատարում են DDoS գրոհներ: Սակայն այժմ նման չարագործների գործունեությունը գնալով ավելի կործանարար է դառնում եւ հանգեցնում է կրիտիկական հետեւանքների՝ տվյալների արտահոսքերի եւ առանձին կազմակերպությունների կոտրանքի: Kaspersky DFI-ի փորձագետները Մերձավոր Արեւելքում արձանագրել են հաքտիվիստների ավելի քան 11 շարժում եւ խումբ:

Նախնական հասանելիության բրոքեր չարագործների հիմնական նպատակը կորպորատիվ ցանցեր մուտքի կետերի որոնումն է: Դրանք այդ թվում վերավաճառվում են ավելի մեծ խմբերի կամ գրոհողների, որոնք ունեն գրոհի հետագա զարգացման հնարավորություն եւ մոտիվացիա: Kaspersky DFI-ի փորձագետները դարքնետում ավելի քան 40 հայտարարություն են հայտնաբերել Մերձավոր Արեւելքի պետական, կրթական, արտադրական, տրանսպորտային, ֆինանսական, բժշկական կազմակերպությունների եւ այլ ոլորտների ձեռնարկությունների կորպորատիվ համակարգերին հասանելիության վաճառքի մասին:

«Չարագործները ոչ միայն կատարելագործում են գոյություն ունեցող մեթոդները, այլեւ մշակում են նոր մարտավարություններ եւ գործիքներ: Անհրաժեշտ է զգոնություն պահպանել՝ կորպորատիվ ցանցերը դարքնետից եկող սպառնալիքներից պաշտպանելու համար: Հարցն այն չէ, թե արդյոք գրոհը տեղի կունենա, այլ ավելի շուտ այն, երբ գրոհը տեղի կունենա: Հետեւաբար, կազմակերպություններին համար կարեւոր է մեկ քայլ առաջ լինել կիբեռչարագործներից»,- մեկնաբանում է Kaspersky Digital Footprint Intelligence-ի վերլուծաբան Վերա Խոլոպովան:

«Կասպերսկի» Հայաստանի ներկայացուցչություն

ԻՆՉ ՀԱՐՑԵՐ ԵՆ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՎԵԼ

ԲԼՈԳԵՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Պետական եկամուտների կոմիտեի եւ ԱԺ մի խումբ պատգամավորների համատեղ նախաձեռնությամբ կոմիտեում տեղի է ունեցել հանդիպում ինֆլյուենսերների մասնակցությամբ՝ քննարկելու սոցիալական հարթակներում գովազդային ծառայությունների մատուցումից ստացվող հարկման համակարգը: Այս մասին հայտնում են ՊԵԿ-ից:

«ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը ողջունելով հանդիպման մասնակիցներին՝ կարեւորել է հատկապես բլոգերների ներգրավվածությունը եւ դերը կամավոր հարկային կարգապահության բարձրացման գործում: Ռուստամ Բադասյանն ընդգծել է, որ կամավոր կարգապահությունն այլընտրանք չունի եւ ոլորտի բոլոր մասնակիցների համար կգործեն հավասար պայմաններ: Հանդիպմանն անդրադարձ է կատարվել հարկման գործող մեխանիզմներին եւ 2025 թվականից նախատեսվող օրենսդրական փոփոխություններին: Քննարկվել են բիզնեսին մատուցվող ծառայությունների դեպքում փաստաթղթավորման խնդիրները: Կարեւորվել է ոլորտի մասնակիցների համար նաեւ ինքնազբաղված անձանց ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա հարկերի վճարման գործընթացը կազմակերպել առավել հարմարավետ եւ պարզեցված մեխանիզմով:

Համացանցի հայաստանյան տիրույթում գովազդային շուկայի կայուն աճին զուգընթաց ՊԵԿ-ի կողմից մշակվել են ինֆլյուենսերների կամավոր կարգապահությանն ուղղված միջոցառումներ: 2024 թ. հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում 44 ինֆլյուենսերների անձնական գրասենյակների էջին էլեկտրոնային եղանակով ուղարկվել են 57 ծանուցագրեր իրացման շրջանառության թերհայտարարարգրման հնարավոր ռիսկերի վերաբերյալ՝ ծանուցագրում նշելով յուրաքանչյուր չփաստաթղթավորված գործարքը: Իրականացված վերլուծական աշխատանքների արդյունքում 2024 թ. հունիսի համեմատ՝ նշված հարկ վճարողների մասով իրացման շրջանառությունը հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին աճել է համապատասխանաբար՝ 119%, 41% եւ 101%-ով: Ինչպես նաեւ 2023 թ. հունվարից սեպտեմբեր ամիսների համեմատ՝ 2024 թ. հունվարից սեպտեմբեր ամիսներին, ընդհանուր առմամբ, իրացման շրջանառությունն աճել է 28%-ով կամ 153.5 մլն դրամով:

Հանդիպումն անցել է ակտիվ հարցուպատասխանի ձեւաչափով: Պայմանավորվածություն է ձեռքբերվել քննարկումները դարձնել շարունակական»,-նշված է հաղորդագրության մեջ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՇԱԽՄԱՏԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

100-ԱՄՅԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹԻՄԻ ԱՆՎԱՆ ՆԵՐՔՈ. ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՂ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այսօր ընդունել է Հայաստանի շախմատի կանանց եւ տղամարդկանց հավաքականներին, որոնք վերջերս Բուդապեշտում մասնակցել են շախմատի համաշխարհային 45-րդ օլիմպիադային:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Արմեն Գեւորգյանը:

ԿԳՄՍ նախարարը ողջունել է շախմատիստներին, շնորհակալություն հայտնել հաջող մրցելույթների համար եւ շնորհավորել նրանց գրանցած արդյունքների առթիվ: Ժաննա Անդրեասյանն ընդգծել է՝ շախմատն առանձնահատուկ նշանակություն ունի հանրության շրջանում, հատկապես այն ժամանակից ի վեր, ինչ շախմատը՝ որպես առարկա, սկսել է դասավանդվել հանրակրթական դպրոցներում:

ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է նաեւ պատանի շախմատիստների հաջող մրցելույթներին, որոնք բարձր արդյունքներ են գրանցել արագ եւ կայծակնային շախմատի Եվրոպայի առաջնությունում. «Սա նշանակում է, որ նաեւ արդյունքների կայունություն ու շարունակականություն ունենք: Մեր երեխաների արդյունքները ցույց են տալիս, որ մեծ վստահությամբ կարող ենք այդ մասին խոսել»:

Ժաննա Անդրեասյանը Հայաստանի շախմատի հավաքականի մարզիկներին ու մարզիչներին շնորհավորել է նաեւ ՖԻԴԵ-ի կողմից 100-ամյակի լավագույն թիմ ճանաչվելու առթիվ:

«Սա մեծ պատասխանատվություն ու պատիվ է: Վստահ եմ՝ դարի լավագույն թիմի անվան ներքո հանդես գալը հետագայում յուրաքանչյուրիդ համար լրացուցիչ պատասխանատվություն է լինելու: Մյուս կողմից՝ կարեւոր է, որ շարունակական աշխատանքը գնահատվում է ոչ միայն երկրի ներսում, այլեւ միջազգայնորեն ճանաչելի է դարձնում Հայաստանը՝ որպես շախմատային երկիր»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու հետագա հաջողություն մաղթել մարզիկներին: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը եւս ողջունել է մարզիկներին եւ շնորհավորել գրանցած արդյունքների համար:

Հիշեցնենք՝ Հայաստանի շախմատի կանանց հավաքականի անդամներ Էլինա Դանիելյանը եւ Աննա Սարգսյանը համաշխարհային 45-րդ օլիմպիադայում բրոնզե մեդալներ էին նվաճել առանձին խաղատախտակներին: Կանանց մրցաշարում Հայաստանի հավաքականը թիմային պայքարում կիսել էր 3-6-րդ հորիզոնականները՝ լրացուցիչ ցուցանիշներով զբաղեցնելով 5-րդ հորիզոնականը: Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականն օլիմպիադայում կիսել էր 2-6-րդ հորիզոնականները՝ լրացուցիչ ցուցանիշներով զբաղեցնելով 6-րդ հորիզոնականը Հայաստանի կանանց հավաքականի առաջատար Էլինա Դանիելյանը, անդրադառնալով արդյունքներին, հավաստիացրել է՝ մշտապես ձգտելու են հասնել ավելիին:

ԿԳՄՍ նախարարի հետ հանդիպմանը Հայաստանի շախմատի հավաքականի անդամները խոսել են իրենց տպավորությունների, առաջիկա անելիքների եւ խնդիրների մասին: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են նաեւ մի շարք այլ հարցերի՝ կապված մարզիկների հանդերձանքի, տեխնիկական հագեցվածության եւ այլնի հետ: Քննարկվել են նաեւ մրցումների նախապատրաստական աշխատանքների եւ տեխնիկական հագեցվածության բարելավմանը վերաբերող հարցեր:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ԿԳՆԱ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն արդեն ավարտել է «Ակադեմիական քաղաք» հայեցակարգի գլխավոր հատակագծի մշակումը, հաջորդ տարի այն կներկայացվի հաստատման: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2025 թվականի պետական բյուջեի նախնական քննարկման ժամանակ այս մասին ասաց ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

«2025 թվականի պետական բյուջեով առանձնացրել ենք առանձին բյուջետային ծրագիր Ակադեմիական քաղաքի համար: Մեծ թափով շարունակելու ենք ծրագրի իրականացումը: Այս տարի ավարտել էինք «Ակադեմիական քաղաք» հայեցակարգի գլխավոր հատակագծի մշակումը: 2025 թվականին արդեն հաստատման կներկայացվի ամբողջական գլխավոր հատակագիծը՝ տեղական օրենսդրության համապատասխան»,- ասաց Անդրեասյանը:

Նախարարը տեղեկացրեց, որ մեկնարկել են նաեւ քաղաքաշինական զարգացման ուսումնասիրության, Ակադեմիական քաղաքի կառավարման մոդելի, Ակադեմիական քաղաքի տրանսպորտային նախագծի մշակման աշխատանքները՝ միջազգային հեղինակավոր գործընկերների հետ կնքված պայմանագրերով:

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ

Երեւանում առաջին անգամ կանցկացվի Երեւանի միջազգային լուսանկարչական փառատոնը:

Այն իրականացվում է հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 28-ը՝ Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ:

Փառատոնի շրջանակում Հայաստան կժամանեն հայտնի լուսանկարիչներ աշխարհի տարբեր երկրներից: Փառատոնը կներկայացնի Երեւանի մասին այնպիսի լուսանկարներ, որոնք երբեւէ չեն ցուցադրվել այստեղ: Կանցկացվեն ցուցահանդեսներ, քննարկումներ, սեմինարներ, արվեստագետների հետ զրույցներ, ինչպես նաեւ արհեստական բանականության կիրառմամբ ցուցադրություններ:

Փառատոնի բացման արարողությունը տեղի կունենա նոյեմբերի 1-ին, ժամը 19:00 Հայաստանի ազգային պատկերասրահում:

Բացման արարողությանը ներկա կգտնվեն եւ իրենց աշխատանքները կներկայացնեն Magnum Photos աշխարհահռչակ գործակալության լուսանկարիչներ Գեորգի Պինխասովը եւ Անդրեա Հոլցիերը, ինչպես նաեւ լուսանկարիչ Պատրիկ Բիներտը:

«ԱԹԱԹՈՒՐՔ» ՖԻԼՄԻ ՌԵԺԻՍՈՐԸ ՄԵՂԱԴՐԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻԻՆ

Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի մանկության մասին պատմող անիմացիոն ֆիլմի ռեժիսոր Քամուրան Այնան խոսել է Եվրոպայում ֆիլմի ցուցադրման հետ կապված խնդիրներից:

Թուրքական Cumhuriyet-ի հետ զրույցում «Աթաթուրք» անիմացիոն ֆիլմի ռեժիսոր Քամուրան Այնան հայտնել է, որ Եվրոպայում Աթաթուրքի մանկության մասին պատմող անիմացիոն ֆիլմի ցուցադրությունից երկու օր առաջ կինոթատրոնների ղեկավարները հրաժարվել են ցուցադրել ֆիլմը առանց հիմնավոր պատճառների:

Նա պնդել է, որ իր տեղեկություններով Եվրոպայում ուժեղ դիրքեր զբաղեցնող Հայկական լոբբիին հաջողվել է կասեցնել ֆիլմի ցուցադրությունը Եվրոպայում:

Ֆիլմի ռեժիսորը նշել է, թե ներկայում աշխատանքներ են տանում կրկին թույլտվություն ստանալու եւ ֆիլմը Եվրոպայում ցուցադրելու համար եւ մոտ են հաջողությանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ՝ ԳՈԼԻ ՀԵՂԻՆԱԿ

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 9-րդ տուրի կենտրոնական խաղում «Ինտեր»-ը սեփական հարկի տակ ընդունեց Տուրինի «Յուվենտուս»-ին:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը խաղի 35-րդ րոպեին շեշտակի, դիպուկ հարվածով վերականգնեց հաշվի հավասարությունը: Հայ կիսապաշտպանն առաջին գնդակը խփեց Սերիա Ա-ի ընթացիկ մրցաշրջանում: Եվ «Ինտեր»-ը 3-րդ գնդակն ուղարկեց «Յուվենտուս»-ի դարպասը: Կրկին 11 մետրանոց հարվածից դուբլի հեղինակ դարձավ Ջելինսկին:

«Ինտեր»-«Յուվենտուս»՝ 4:4:

Այս տուրից հետո «Ինտեր»-ը Սերիա Ա-ի մրցաշարային աղյուսակում 2-րդն է (20 միավոր): «Յուվենտուս»-ը՝ 4-րդն է (16 միավոր): Առաջատարը «Նապոլի»-ն է (22 միավոր):

ԱՐՑԱԽՑԻ Է. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԸ ՀԱՂԹԵԼ Է ԹՈՒՐՔ ՄԱՐԶԻԿԻՆ

Արցախցի բռնցքամարտիկ Էրիկ Առուստամյանն աշխարհի երիտասարդական առաջնությունում հաղթել է թուրք մարզիկին:

57 կգ քաշային Էրիկ Առստամյանը Չեռնոգորիայում ընթացող բռնցքամարտի աշխարհի երիտասարդական առաջնության քառորդ եզրափակիչ է դուրս եկել՝ տեխնիկական նոկաուտով պարտության մատնելով թուրք Չաղրի Ֆիդանին:

Առստամյանի հաջորդ մրցակիցը հոկտեմբերի 30-ին կլինի ադրբեջանցի Թաղի Նասիբովը:

«ՆՈԱ»-Ն ՀԱՂԹԵՑ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 13-րդ տուրը ավարտվեց «Արարատ-Արմենիա»-«Նոա» խաղով:

Ավանի ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտում կայացած խաղում «Նոա»-ին հաջողվեց առավելության հասնել մեկ գնդակի շնորհիվ: Առաջին կեսի 20-րդ րոպեին «Նոա»-ի միակ եւ հաղթական գնդակը խփեց Ֆերերան:

Այս տուրից հետո Պրեմիեր լիգայի մրցաշարային աղյուսակի առաջատարը մնում է «Ուրարտու»-ն (29 միավոր): Երկրորդ տեղում 25 միավորով «Փյունիկ»-ն է: «Արարատ-Արմենիա»-ն 24 միավորով 3-րդն է, իսկ «Նոա»-ն 19 միավորով 4-րդն է:

ԱՇԽԱՐՀԻ 43-ՐԴ ՌԱԿԵՏ

Ռուսաստանաբնակ հայազգի թենիսիստ Կարեն Խաչանովը բարելավել է իր դիրքը Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) թարմացված վարկանիշում՝ ընդհուպ մոտենալով լավագույն քսանյակին: Խաչանովը վարկանիշային աղյուսակում բարձրացել է 3 հորիզոնականով եւ այժմ զբաղեցնում է 21-րդ հորիզոնականը:

Հայ թենիսիստուհի Էլինա Ավանեսյանը եւս բարձրացել է WTA վարկանիշային աղյուսակում:

● Նոյեմբերի 9-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱՀԱՋԱՆԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարող եմ անել ես, եթե ինձ մտերիմ մեկը ենթարկվում է բռնության:

Սամվել Ներսիսյան (18 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե դուք ունեք ընկերներ կամ ընտանիքի անդամներ, որոնք գտնվում են անառողջ հարաբերության մեջ, ուր առկա է բռնություն, ամենակարեւոր բանը, որը կարող եք անել, փորձել լսել եւ լինել հասկացող: Մի՛ դատեք, հիշե՛ք, որ բռնության մթնոլորտում ապրելը երբեք հեշտ չէ:

Խոսե՛ք Ձեր ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ, տեղեկացրե՛ք եւ բացատրե՛ք, որ բռնությունը նորմալ չէ: Նրանք, հնարավոր է, չգիտակցեն կամ չընդունեն, որ ենթարկվում են բռնության:

Ոչ մի դեպքում մի՛ մեղադրեք նրան եւ մի՛ առաջացրեք մեղավորության զգացում:

Բացատրե՛ք, որ նա մեղավոր չէ եւ արժանի չէ նման հարաբերությունների:

Լսե՛ք եւ փորձե՛ք ապրումակցել նրան:

Բարձրացրե՛ք նրա՝ անվտանգ եւ առողջ մթնոլորտում ապրելու իրավունքի գիտակցումը:

Հորդորե՛ք նրան զանգահարել ոստիկանություն կամ ընտանեկան բռնության թեժ գիծ եւ հայտնել բռնության դեպքի մասին:

Գտե՛ք բռնության ենթարկված անձի համար անհրաժեշտ առկա ռեսուրսներ Ձեր տարածքում:

Զանգահարե՛ք ընտանեկան բռնության թեժ գծեր Ձեր ընկերոջ կարգավիճակի մասին տեղեկացնելու համար:

Կրթե՛ք ինքներդ Ձեզ՝ կարդալով գրքեր կամ օնլայն հոդվածներ՝ ընտանեկան բռնության մասին:

Երբ Ձեր ընկերը կամ ընտանիքի անդամները հասկանում են, որ իրենց հարաբերության մեջ առկա է բռնություն, օգնե՛ք նրանց ստեղծել անհատական անվտանգության ծրագիր:

Ընտանեկան բռնության դեպքերի տվյալների առցանց հարթակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երբ Ձեր ընկերը կամ ընտանիքի անդամները հասկանում են, որ իրենց հարաբերության մեջ առկա է բռնություն, օգնե՛ք նրանց ստեղծել անհատական անվտանգության ծրագիր:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՊԱՍՏԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավունքներ եւ պարտականություններ ունեն ապաստան հայցողները.

Լեք Քեբաբջյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողները Հայաստանում ազատ տեղաշարժի, աշխատելու, կրթության, անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու, անվճար բուժօգնություն ստանալու եւ մի շարք այլ իրավունքներ ունեն:

Նրանք իրենց իրավունքներից օգտվելիս պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները եւ ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապաստան հայցողները պարտավոր են համագործակցել Միգրացիոն ծառայության հետ, տրամադրել հավաստի ու ճշմարիտ տեղեկություններ, վճարել բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, ինչպես Հայաստանի քաղաքացիները: Նրանք պարտավոր են պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այս երկու մրգավաճառները գրավել են անցորդների, գնորդների եւ «լուսանկարիչների» ուշադրությունը՝ գրքին ընկղմված իրենց հայացքներով:

Թերեւս հետաքրքիր լուսանկար է, եւ ինչու ոչ՝ ուսանելի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*